352
Հ-16

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՏԱՐԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ՀՍԽՀ ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՈՎ)

Կազմեց՝ Գ. ՀԱԽՈՒՄՅԱՆ

Հրատարակություն
ՀՍԽՀ Բան.-Գյուղ. Միլիցիայի գլխավոր վարչության
Յերևան—1932 թ.

ՀԱՆՐԱՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍԽՀ-ՍՍՌ
им. А. Мясникяна

09 JUL 2013

39799

352
Հ-16
Ար.

01 MAR 2010

Պետհրատի տպարան
Գլավլիտ 7653
Պատվեր 2019
Տիրաժ 1500

36763

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1932 թ. ապրիլի 13-ի վորոշումը՝ «Գյուղական կատարածների մասին» հետապնդում է խոշոր քաղաքական նպատակ։

Գյուղական կատարածների հատատությունը ծառայում է այն նպատակի համար, վորպեսզի Գյուղական Խորհուրդները և Բանվորա-գյուղացիական Կարմիր Միլիցիան կարողանան հաջողությամբ և ժամանակին կատարել Խորհրդային իշխանության հանձնարարությունները՝ հասարակական անվտանգությունն ու հեղափոխական կարգը պահպանելու, պետական և հասարակական գույքի և բարեկարգության վրա հսկողություն սահմանելու ուղղությամբ։

Գյուղական կատարածներն իրենց գործունեության ընթացքում հենվում են աշխատավորական լայն մասսաների վրա և նրանց կազմակերպում գյուղի սոցիալիստական շինարարության բոլոր ձեռնարկումներն իրականացնելու համար։

Նրանք իրենց վրա դրված գործնական խնդիրներն իրագործելու համար առաջին հերթին մասնակից են դարձնում Միլիցիայի ոժանդակող ընկերության անդամներին, կոլտնտեսականներին և չքավորական խմբակներին։

Կենտգործկոմի և Ժողկոմխորհի այդ վորոշումը պետք է սեփականություն դարձվի Միլիցիայի բոլոր աշխատակիցների համար. այդ նպատակով կազմած հարց ու պատասխանի ձևով բացատրական ձեռնարկը հանդիսանում է պարզ—հանրամատչելի նյութ այդ խնդիրն իրագործելու համար։

ՀՍԽՀ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

5 հունիսի 1932 թ.
Երևան.

29 MAY 2013

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՏԱՐԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Վորոշում ՀՍԽՀ Կենտգործկոմի յեվ Ժողկոմխորհի).

1. Ո՞ւմ կողմից յեվ յե՞րբ ե ընդունված գյուղական կատարածուների մասին նոր որենքը.

Գյուղական կատարածունների մասին նոր որենքն ընդունված ե Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից 1932 թ. ապրիլի 13-ին։

Այս վորոշմամբ վերացված ե նախկին վորոշումը, վոր հրատարակված եր 1926 թ. փետրվարի 10-ին (տես ՀՍԽՀ որենքների և կարգադրությունների ժողովածու 1926 թ., № 4, հոդված 31), և նրան վերաբերյալ որենսդրական հետագա փոփոխությունները։

2. Ի՞նչ նպատակի յե ծառայում այդ որենքը.

Այդ որենքի նպատակն ե, վորպեսզի գյուղական խորհուրդները և բանվորա-գյուղացիական Միլիցիան կարողանան հաջողությամբ և ժամանակին կատարել իրենց պարտականությունները և իշխանության մարմինների հանձնարարությունները՝ հասարակական անվտանգություն և հեղափոխական կարգը պահպանելու, պետական ու հասարակական գույքի և բարեկարգության վրա հսկելու նկատմամբ, վորոնք անհրաժեշտ են սոցիալիստական շինարարությունն ապահովելու և գյուղական աշխատավոր բնակչության ինքնագործունեությունը զարգացնելու համար։

3. Ո՞վքեր կարող են լինել գյուղական կատարածու.

Գյուղական կատարածու կարող են լինել 18-ից վոչ պակաս և 50-ից վոչ ավելի տարիք ունեցող այն տղամարդիք և 18-ից վոչ պակաս և 45-ից վոչ ավելի տարիք ունեցող այն կանայք, վորոնք զրկված չեն ընտրական իրավունքից։

4. Ո՞վքեր չեն կարող լինել գյուղական կատարածու.

Գյուղական կատարածու չեն կարող լինել բոլոր այն անձինք, վորոնք զրկված են ընտրական իրավունքից, խորհրդային հիմնարկություններում ծառայելու նկատմամբ դատավճռով յենթարկված են սահմանափակման, դատական կամ վարչական կարգով աքսորված են, դատի կամ քննության տակ են և չունեն սահմանված կարգով վերացված դատվածություն։

5. Վնասո՞ւմ են արդյոք վորեվե՛ն տուրք գյուղական կատարածու լինելու իրավունքից զրկված անձինք.

Այո. նրանք յենթակա յեն տեղական հատուկ տուրքադրման ըստ տեղական ֆինանսների վերաբերյալ կանոնադրության։ Սակայն ընտրական իրավունքից զրկված անձը, յեթե ըստ իր տարիքի չի համապատասխանում գյուղական կատարածու լինելու համար, տուրքադրվել չի կարող։

6. Ո՞վքեր են ազատվում գյուղական կատարածուի պարտականությունները կրելուց.

Գյուղական կատարածուի պարտականությունները կրելուց ազատվում են՝

ա) Գործադիր կոմիտեների և գյուղական խորհուրդների նախագահներն ու անդամները.

բ) Խորհրդային և կոոպերատիվ հիմնարկությունների ու ձեռնարկությունների մշտական ծառայողները.

գ) Այն անձինք, վորոնք ունեն այդ պարտականությունները կատարելու համար արգելք հանդիսացող հիվանդություններ և ֆիզիկական պակասություններ.

դ) Կանայք—ծննդաբերությունից յերկու ամիս առաջ և ծննդաբերությունից հետո մանկանը կրծքով կերակրելու ժամանակամիջոցում.

ե) Մինչև ութ տարեկան յերեխաներ ունեցող կանայք, յեթե նրանք հոգացող անձ չունեն.

զ) Կրտսեր զինվորների ընտանիքները—կարմիր բանակում և նավատորմում ծառայելու ժամանակամիջոցում։

7. Բացի վերոհիշյալներից՝ ո՞վքեր չեվս կարող են ազատվել այդ պարտականություններից.

Գյուղական խորհուրդներին իրավունք է վերապահվում գյուղական կատարածուների պարտականությունները կրելուց ազատել նաև հետևյալ բացառիկ դեպքերում.

ա) Յեթե տնտեսության անդամների թվում կա տնտեսություն վարող միայն մեկ աշխատունակ անձ.

բ) Յեթե տնտեսությունը վորևե տարրերային դժբախտության կամ աշխատավոր ձեռքի պակասության հետևանքով խոշոր չափով ջնջվել է։

8. Ո՞վ է նշանակում գյուղական կատարածուներին.

Գյուղական կատարածուներին նշանակում են գյուղական խորհուրդները։

9. Ո՞վ է սահմանում գյուղական կատարածուների թիվը.

Գյուղական կատարածուների թիվը թե ըստ գյուղի և թե ըստ ամբողջ գյուղխորհուրդների՝ սահմանում է գյուղխորհուրդների պլենումը։

Խոշոր գյուղերում ամեն մի 25 մենատնտեսությանը կամ 30 կոլտնտեսությանը նշանակվում է մեկ կատարածու։

10. Ի՞նչ ձևով են նշանակվում գյուղական կատարածուները.

Գյուղական կատարածուները մենատնտեսություններից նշանակվում են գյուղական խորհուրդի կողմից անմիջաբար, իսկ կոլտնտեսական հատվածում — կոլեկտիվ տնտեսությունների վարչության կողմից մատնանշված թեկնածուներից։

Կատարածուներ նշանակելիս՝ գյուղխորհուրդն առաջի հերթին բաժանում է գյուղը թաղամասերի այն հաշվով, որ ամեն մեկ կատարածու սպասարկի մինչև 300 բնակիչ, իսկ յեթե գյուղի բնակիչների թիվը 300-ից պակաս է, այն ժամանակ գյուղ-կատարածուների թիվը համենայն դեպս չպետք է յերեք հոգուց պակաս լինի։

Աշխատանքի ոգտավետության տեսակետից՝ կատարածուներից մեկը նշանակվում է ավագ կատարածու։

11. Ի՞նչպես են կազմվում գյուղական կատարածուների ցուցակները.

Յուրաքանչյուր գյուղխորհուրդ պետք է նախապես կազմի այն գյուղացիների անձնացուցակը, որոնք զրկված են կատարածու լինելու իրավունքից (կցվում է № 1 որինակելի ձևը) և որոնք ազատված են այդ պարտականություններից (կցվում է № 2 որինակելի ձևը)՝ այնուհետև անհրաժեշտ է կազմել այն գյուղացիների անձնացուցակը, որոնք կանչվում են կատարածուական պարտականությունները տանելու համար (կցվում է № 3 որինակելի ձևը)։ Այդ անձնացուցակը կախվում է գյուղխորհուրդի և կոլտնտեսության վարչության շենքերում՝ ի գիտություն բոլորին։

12. Ի՞նչպես է սահմանվում կատարածուների հերթապահությունը.

Կատարածուների հերթի կարգը սահմանվում է նրանց տնտեսական և աշխատավորական կարողության համեմատ։

Սահմանելով հերթապահություն՝ գյուղական խորհուրդը միաժամանակ պիտի նշանակի անձնափոխանորդներ, որպեսզի այս կամ այն կատարածուի բացակայության դեպքում (հիվանդության, դժբախտության և այլ պատճառով) կատարեն նրա պարտականությունը։

13. Ո՞վ է սահմանում գյուղական կատարածուների ծառայության տեվողությունը.

Գյուղական կատարածուների ծառայության տևողությունը սահմանում է գյուղխորհուրդը, հատուկ վորոշմամբ։

14. Վո՞րքան ժամանակով է սահմանվում այդ ծառայության տեվողությունը.

Գյուղական կատարածուների ծառայության տևողությունը կարող է լինել մեկ ամսից վոչ պակաս և յերեք ամսից վոչ ավել ժամանակով։

15. Ստանո՞ւմ են արդյոք վարձատրություն գյուղկատարածու լինելու համար.

Վոչ. գյուղական կատարածուի պարտականությունները կատարվում են ձրիաբար։ Սակայն կոլտնտեսության գյուղա-

կան կատարածների աշխատանքները հաշվառման պետք է յենթարկվեն պատշաճ կոլտնտեսությունների վարչությունների կողմից, և յեկամուտները բաշխելիս՝ գյուղական կատարածների պաշտոնը տանելու ամբողջ ժամանակի համար պետք է տրվի վարձատրություն աշխատավարձի միջին նորմայի չափով։

16. Թույլատրվո՞ւմ է արդյոք հրաժարվել գյուղական կատարածուի պարտականություններից.

Վոչ։

17. Ի՞նչ պատասխանատվություն են կրում հրաժարվողները.

Գյուղական կատարածուի պարտականություններից հրաժարվողները կարող են յենթարկվել քրեական պատասխանատվության, վորպես իշխանության վորոշման չենթարկվողներ։

18. Ո՞ւմ են յենթարկվում գյուղական կատարածուները.

Գյուղական կատարածուներն անմիջականորեն յենթարկվում են գյուղական խորհուրդին և հաշվետու յեն վերջինիս առաջ։ Սակայն նրանք պարտավոր են կատարել նաև Միլիցիայի տեղական մարմինների բոլոր կարգադրությունները, վորոնք բղխում են այս ձեռնարկի 20-րդ հարցում թված կետերից։

19. Ո՞ւմ է հանձնարարված կատարածուների հաշվառումը յեվ հրահանգումը գյուղական խորհուրդի շրջանակում.

Կատարածների հաշվառումը և հրահանգումը գյուղխորհուրդի շրջանակում դրված է Միլիցիայի շրջանային տեսուչների վրա։

20. Ի՞նչ պարտականություններ են դրված գյուղական կատարածուների վրա.

Գյուղական կատարածների վրա դրված են հետևյալ պարտականությունները՝

ա) մասնակցել գյուղխորհուրդների ընտրական կամպանիայի աշխատանքներին, ընտրական իրավունքից զրկվածների ցուցակները կազմելու վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ հավաքելու, նաև վերընտրությունների ժամանակի մասին ընտրողներին տեղեկացնելու, ընտրական հանձնաժողովի կարգադրությունները բնակչությանը հաղորդելու համար,

բ) հաղորդել քաղաքացիներին իշխանության մարմինների կարգադրությունները.

գ) հսկել իրենց հանձնարարված տերրիտորիայում կարգ ու կանոնի և անդորրության վրա և միջոցներ ձեռք առնել խախտված կարգը վերականգնելու համար,

դ) հսկել գյուղի մաքրության ու սանիտարական դրության, ճանապարհների և մելիորատիվ կառուցվածների բարվոք դրության վրա,

ե) հսկել հակահրդեհային կանոնների կատարումը, կազմակերպել ու հսկել պետական ու հասարակական գույքի պահպանությունը,

զ) առաջնորդել դեպի գյուղխորհուրդ այն անձանց, վորոնք հանցագործություն են կատարել կամ, վորպես հանցագործության մեջ կասկածելի, ձերբակալվել են միլիցիայի մարմինների և այլ պաշտոնատար անձանց կողմից,

ը) միլիցիայի մարմինների առաջադրությամբ ուղեկցել պակաս կարևոր հանցագործությունների համար ձերբակալվածներին,

թ) կարգ պահպանել հասարակական վայրերում և քաղաքացիների մասսայական խմբավորման դեպքերում,

ժ) ուղեկցել այն արժեքները, վորոնք փոխադրվում են իշխանության մարմիններին հանձնելու համար,

ի) հաղորդել գյուղխորհուրդներին և միլիցիային կատարված բոլոր հանցագործությունների և պատահարների մասին. միջոցներ ձեռք առնել հանցագործներին ձերբակալելու և հանցագործության հետքերը պահպանելու համար,

լ) հսկել իշխանության մարմինների պարտադիր վորոշումների իրականացմանը և կատարած խախտումների մասին կազմել արձանագրություններ,

խ) հաղորդել գյուղական խորհուրդներին և միլիցիային ողի քաշելու, պահելու, ծախելու, նաև վոգելից խմիչքների ապորինի վաճառքի դեպքերի մասին,

ծ) հաղորդել գյուղական խորհուրդներին գյուղում պատահած համաճարակների բոլոր դեպքերի մասին,

կ) որենսդրությամբ սահմանված կարգով մասնակից անել բնակչությանն աշխատանքային և տրանսպորտային պարհակին,

լ) կատարել գյուղական դատարանների բոլոր վորոշումները

և ժողովրդական դատարանների մինչև 100 ռուբլու հասնող դրծերի վերաբերյալ վորոշումները։

21. Թույլատրվո՞ւմ է արդյոք գյուղական կատարածուների վրա դնել այլ պարտականություններ, վորոնք չեն նախատեսված նախորդ հարցում.

Գյուղական կատարածուների վրա կարելի չի դնել նաև տեղական պայմաններից բղխող այլ պարտականություններ, սակայն միայն համապատասխան շրջգործկոմի հատուկ՝ վորոշմամբ կամ թույլտվությամբ։

22. Ի՞նչ իրավունքներ են վայելում գյուղական կատարածուները իրենց վրա դրված պարտականությունները կատարելիս.

Գյուղական կատարածուներն իրենց վրա դրված պարտականությունները կատարելիս վայելում են պաշտոնատար անձի իրավունքները և պատասխանատու չեն վորպես պետական պաշտոնյաներ։ Ուստի նրանց որինական կարգադրությունները պարտադիր են քաղաքացիների համար, և այդ կարգադրությունները չկատարող անձինք յենթակա չեն քրեական պատասխանատվության, վորպես հանրային ապահովությունն ու խաղաղությունը պաշտպանող մարմինների կարգադրությունները չկատարողներ։

Պարզ է, վոր որինաղանցություն կատարող գյուղական կատարածուն համանպես յենթակա չի քրեական պատասխանատվության։

23. Ի՞նչ պիտի ունենա իր մոտ գյուղական կատարածուն ծառայության ժամանակ՝

Իր պաշտոնական պարտականությունները կատարելիս՝ գյուղական կատարածուն պարտավոր է իրեն մոտ ունենալ գյուղխորհուրդից ստացած վկայականը (կցվում է № 4 որինակելի ձևը) և կրել որենքով սահմանված կրծքանշան։

24. Ո՞ւմ վրա չեն հենվում գյուղական կատարածուներն իրենց գործունեության ընթացքում.

Գյուղական կատարածուներն իրենց գործունեության ընթացքում հենվում են աշխատավորական լայն մասսաների վրա, վորոնց կազմակերպում են գյուղի սոցիալիստական վերակառուցման նպատակով կատարվող բոլոր ձեռնարկումներն իրականացնելու համար։

25. Ո՞ւմ պետք է մասնակից անեն գյուղական կատարածուները իրենց վրա դրված խնդիրները իրագործելու համար.

Գյուղական կատարածուներն իրենց վրա դրված գործնական խնդիրները իրագործելու համար առաջին հերթին պետք է մասնակից անեն Միլիցիային ոժանդակող ընկերության անդամներին, կոլտնտեսականներին և չքավորական խմբակներին։

26. Ցենքարկվո՞ւմ են արդյոք գյուղական կատարածուները վորևէ պարհակի.

Կատարածուական պարտականություններին անցածները չեն յենթարկվում այդ ժամանակամիջոցում հայտարարված վորևէ հասարակական պարհակի։

Ձև № 1.
(Ոբինակելի)

Հաստատված է
Գյուղխորհրդի «____»_____1932 թ. նիստում
(Արձ. № ____, կետ ____).

ՑՈՒՑԱԿ

_____գյուղի այն անձանց, վորոնք զրկված են կատարածու լինելու իրավունքից.

№ հերթական	Ազգանուն, անուն և հայրանուն	Տարիք.	Ընտրական հրահանգի վոր հոդվածի հիման վրա է զրկված.	Տնտեսական դրություն.	Տուրքի չափը.		Մեկնաբանություն.
					Ռ.	Կ.	
1	2	3	4	5	6	7	8
1.							
2.							
3.							

Գյուղխորհրդի նախագահ՝ (ստորագրություն)

Քարտուղար՝ (ստորագրություն)

«____»_____1932 թ.

Ձև № 2.
(Ոբինակելի)

Հաստատված է
Գյուղխորհուրդի «____»_____1932 թ. նիստում.
(արձ. №____, կետ____).

ՑՈՒՑԱԿ

_____գյուղի այն անձանց, վորոնք ազատված են գյուղական կատարածուի պարտականությունները կրելուց.

№ հերթական	Ազգանուն, անուն և հայրանուն.	Տարիք.	Ինչ հիմունքներով և ազատվել (գործկոմի նախագահ, կարմիր զինվորի ընտանիքի անդամ, հիվանդ և այլն).	Մեկնաբանություն.
1	2	3	4	5
1.				
2.				
3.				

Գյուղխորհրդի նախագահ՝ (ստորագրություն)

Քարտուղար՝ (ստորագրություն)

«____»_____1932 թ.

Ձև № 3.
(Օրինակելի)

Հաստատված է
Գյուղխորհրդի «____» ________ 1932 թ. նիստում.
(Արձ. №____, կետ____).

ՑՈՒՑԱԿ

________ գյուղի այն անձանց, վորոնք նշանակված են գյուղի կատարածուներ.

№№ ըստ կարգի	Ազգանուն, անուն, հայրանուն.	Տարիքը	Յերբվանից է նշանակված գյուղ. կատարածու (ամիս, ամսաթիվ).	Յերբ է ավարտել իր պարտականությունը (ամիս ամսաթիվ)	Վոր թաղամաս. (Նշել թաղամասի անունը կամ №-ը).	Ծանոթություն. (Յեթե ժամկետից շուտ է թողել իր պարտականությունը՝ նշել պատճառները).
1	2	3	4	5	6	7
1.						
2.						
3.						

Գյուղխորհրդի նախագահ՝ (ստորագրություն)

Քարտուղար՝ ստորագրություն

«____» ________ 1932 թ.

ՀԱՅ. ՀԱՆՐԱՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникяна

Ձև № 4
(Օրինակելի)

Գյուղխորհրդի շտամպը

ՎԿԱՅԱԿԱՆ

Ուժի մեջ է առ. 10/IX 1932 թ.

Ջիգդամլու գյուղի բնակիչ՝ Արամ Պողոսի Սարգսյանը նշանակված է Ջիգդամլուի գյուղկատարածու 1932 թ. հունիսի 10-ից մինչև նույն թվի սեպտեմբերի 10-ը։

Գյուղխորհրդի նախագահ՝ (Վ. Մուրադյան)

Քարտուղար՝ (Կ. Ջրբաշյան)

ՀՀ Ազգային գրադարան
NL0213382

39799